

ՈՂՋՈՅՆԻ ՔՄԱՅՔՆԵՐԸ

ԲԱՐԵԻ

-Բարե՛ւ,-

Մէկ հատիկ այս քառն եմ ասում՝
Կնճուած անձնագիր ցոյց տալու նման,
Կենսագրութիւն պատմելու նման,
Կամ հարցաթերթիկ լրացնելու պէս:

Եւ կ'ուզենայի,

Շա՛տ կ'ուզենայի,

Որ այս քառն իրօք դառնար անձնագիր
Աշխարհո՛ւմ համայն,
Ամէնքի համար:

Եւ կ'ուզենայի,

Շա՛տ կ'ուզենայի,

Որ նմանապէս այս քառը լինէր
Նոր եւ իրական մի «Բացուի՛ր, Սեզա՛մ»:

-Բարե՛ւ,-

Ասէիր գնացփին,

Նաւին

Կամ օդանաւին,

Ու ներս մտնէիր.

«Բարեւ»ըդ իբրեւ տոմսակ ընդունուէր:

-Բարե՛ւ-

Ասէիր կնոջն անձանօթ,

Ու նա քեզ սիրէր հենց նո՛յն վայրկեանին

Կամ ներումնահայց ժպտով ասէր,

Թէ քարեւե՛լ են քեզանից առաջ:

-Բա՛րեւ,-

Ասէիր, եւ պարզ երկինքը

Իսկո՛յն անձրեւէր, եթէ պէտք է դա:

-Բա՛րեւ,-

Ասէիր լուկեաց հողին,

Եւ նա ծլարկէր ու հասկաւորուէր:

-Բա՛րեւ,-

Ասէիր մահի՛ն էլ անգամ,
եւ նա հասկանար, որ քեզ մօտ գալով՝
Ինքը շտապե՛լ,
Շա՛տ է շտապել...

-Բա՛րեւ-ը դառնար իրական ու նոր մի... «Բացուի՛ր, Սեզա՛մ»:

եւ այն ժամանակ եթէ արջին էլ ասէիր
-Բա՛րեւ,-

Նա էլ միգուցէ հենց նոյն վայրկեանին
Խաղալիք դառնար մեր մանկան համար
եւ մի այնպիսի՛ կարգին խաղալիք,
Որ ո՛չ լարուում է, ո՛չ էլ հասարակ բանից փչանում:
Այսպէս էլ՝ օձը ծերերի ձեռքին ձեռնափայտ դառնար,
Կոկորդիլոսը դառնար պահարան խաղալիքների,
Կախարան դառնար եղջերուն վայրի,
եւ փոթորիկը՝ բեմի պարախումբ,
Մարդն էլ՝ Մա՛րդ իրօք...

Անկարելի բան աշխարհում չկա՛յ,
եթէ աշխարհում իշխում է բարին,
Որ մեր բերանում դարձել է՝

-Բա՛րեւ.

Ուրեմն՝ անձնագիր ցոյց տալու նման,
Կենսագրութիւն պատմելու նման
Կամ հարցաթերթիկ լրացնելու պէս՝

-Բա՛րեւ,-

Քե՛զ
Ու Ձե՛զ,
Ծանօ՛թ-անծանօ՛թ իմ սիրելիներ:

Թո՛ղ անկարելին դառնայ կարելի
Աշխարհո՛ւմ համայն,
Ամէնքիս համար,
Դառնայ կարելի վաղն ու հենց հիմա,
Դառնայ կարելի մէ՛կ բառով՝

-Բարե՛ւ...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

19.11.64

PAREV! (GOOD-DAY)

*by Baruyr Sevag
Yerevan
19th February, 1964.*

Parev!

Utter I this word
As if brandishing my stamped passport,
Telling my life's story
Or, filling a questionnaire.

Oh, how I yearn, I desire so badly
To make this word
A real ID
For every soul on this earth!

And I really, really wished,
Longed for so much
The word to become
The new and real "Open Sesame!"

If only one could just shout
Parev!
And enter the ship about to sail,
Or the roaring jet set to soar,
With this saluting word being one's ticket.

Greet a woman you have never met
with that single word
"Parev,"
And hope
She would fall in love with you in a blink
Or, with an apologetic smile lets you
Know, she was already greeted
Long before you showed up!

Exclaim that word
Parev
While the earth smolders in scorching heat
And, hope rain to fall right then
From the vast blue sky.

Say parev to the peaceful and quiet earth
And yearn for dainty sprigs suddenly to bloom
Into a gleaming incandescence of ripened wheat.

Salute approaching death with
Parev
For it to realize it is rushing too much.

For as long as the word,
Parev, becomes a new but real “Open Sesame!”

Or address a bear with
Parev,
And may be at that moment
It transforms into a child’s toy
That need need not be wound nor be damaged,
Just like a snake becomes a cane in an aging hand,
The crocodile, a toy closet,
The wild elk, a hanger,
The storm, a dance troupe, and
Man, a real, true Man at long last.

There isn’t anything impossible in this world!
If goodness is king lording the world,
And in our everyday conversations
It has been transfigured into
Parev

Then,
Parev
To you, and
To everyone,
Friend or stranger,
Just like showing a passport,
Telling a life story,
Or, just like filling a questionnaire.

And at last, let the world over
The impossible become possible
And for all of us
Let tomorrow be here in an instant,
Be possible right now, with that matchless word

Parev!
Good-Day.

*Translated by
Marzbed Margossian*